

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

10 յուլիսի

Մահը իր հետ կարծես մեր հայ հարուստների համար բերում է դեպի ազգը ունեցած սեպուհ պարտականութեան յիշելու դորովիները։ Այն հայը, որ իր ամբողջ կեանքի մէջ չէր ճանաչել իր զէպի ազգը ունեցած պարտականութիւնները ու անգամ չէր էլ իմանում թէ ինչ է ազգը, այլ իրան նուիրել էր միայն փող ժողովներուն, կարծես ժամանակ երկիւղը մտաբերել է տալիս նրան բոլորը, ստիպում է նրան յիշել իր նուիրական պարտքերը։ Սա եւս մի յատկութիւն է մեզ համար։ Բայց և գտնվում են այնպիսիները, որոնց վրա ոչ մահվան սարսափը, ոչ ազգու յորդորները, ոչ վերջին անգամի դատաւարանի վճիռը և ոչ մի բան չէ ներգործում։ Այս վերջինների թիւում կարելի է հաշվել նորերումս իրենանում մեռնող Յովակիմ Զաքարեանին, որ քաղաքիս հարուստներից մէկն էր։ Հանգուցեալը չէ ունեցել ազգային ասպարիզում ոչ նշանաւոր և ոչ աննշան գործունէութիւն, նա իրան նուիրել էր հարստութիւն ժողովներուն։

Վերջին նրա հիւանդութիւնը, որ անհերկ կեանքին գերեզման էր սպառնում, յիշեցրեց նրան կտակ թողնելու պարտքը։ Հանգուցեալը հպատակեց այդ յիշողութեանը. բայց ոչ այնպէս, ինչպէս սպասում էին քաղաքացիք։ Ինքն, չը նայելով որ բնական երկար ժամանակվայ աճածագած էր, չուէր որ մի զաւակ ունէր միայն երկու հօրեղբոր որդիներ, որոնք երկուսն էլ իրանց հարստութիւններով կարող են առաջինները համարել։ Երեւանում Վերջնապէս քաղաքացիների յայտը և սպասելիքը եղան զուր։ Տկարի մէջ բարեկամասիրութեան կողմը շատ զօրեղ ու բարձր էր լինում ընդհակառակը ազգասիրութիւնը թող, մինչև այն աստիճան, որ հանգուցեալի հօրեղբայրները անձամբ մերժում են նրա իրանց տուած բաժինը, և խնդրում են այն նուիրել ազգային դպրոցներին, իր յիշատակը սաներ ունենալով անվերջ պահպանելու համար։ Բայց դուր եւ լինում այդ առաջարկութիւնները, ինչպէս և դուր կառկապի քահանայի ազգու յորդորները, ջերմ խնդիրները և այլ տեսակ բարոյները, միայն հանգուցեալը յիշելու կտակագիր հօրը այսքանա ասում է բերանացի. «Սա կատարում եմ իմ բարեկամական պարտականութիւնս, իսկ թէ իմ հօրեղբոր որդիներս ինձ այնքան կը սիրեն, իմ յիշատակս այնքան կը յարկեն, և վերջնապէս կը ցանկան իրանց անժառանգ մեռնող հօրեղբոր որդուն, զէմ գերեզմանում մշտական հողեր ստանալով միմեկին, դա կը լինի իրանց պարտա հատուցումը։—Իմ բարեկամներ ու կը լինի իրանց կողմից ինձ սիրելու ու ազգային նուիրական գործերը յարգելու կենդանի պայցոյցը։ Նա կատարում եմ իմ պարտքը, թող նոքա էլ անեն իրանցը։»

Այս արդար և սրբա խոստովանութիւնը և հանգուցեալի վերջին բերանացի ոտը կտակը իսկութեամբ թաղման հանդիպին բարեհոգի Այվազեանց կարագանը վարպետի բերանով յայտնվում է հանդիսականներին։ Եւ այժմ էլ ամեն տեղ խօսվում է դրա վրա ու ամենքն էլ ասում են, որ հանգուցեալի հօրեղբոր որդիները—Մկրտիչ և Ղևոնդ Ղազարեանները խոստացել են մեծ ուրախութեամբ իրանց հասնելու բաժինը նուիրել մէջը հողեր գլորոցին և միւսը Գայեանեան օրիորդաց ուսումնարանին։

Իսկ մենք մեր կողմից բարոյական յիշողութեան ու ամենակին կտակած չունենք, որ ինչեւ պարտքները, որոնցից պ. Ղևոնդ Ղազարեանը արդէն մի անգամ ապացուցեց իր ուսման յարգ ու պատիւ ճանաչելը, կառուցանելով իր ծախքով Գայեանեան օրիորդաց դպրոցի գեղեցիկ շէնութիւնը, ամենայն սիրով և ուրախութեամբ կը կատարեն իրանց հօրեղբոր որդու բերանացի կտակը, քան թէ ձեռք կը ձգեն միաւորելու այն հասնելու բաժինը իրանց մեծ հարստութեան հետ, մահաւանդ որ դրանով ցոյց կը տան իրանց ազգականին սիրել ու յարգելը, նրա յիշատակին կենդանի արձան կանգնեցնելով ազգային դպրոցների միջում, պահելով հանգուցեալի ծախքով սաները։

Երեւանցի

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

9 յուլիսի

Մենք մեր անցեալ նամակում խօսելով դաւաքների վրա ցոյց տուինք թէ ինչ վնասակար դեր են խաղում նրանք մեր քաղաքի հասարակութեան մէջ. այժմ պարտաւորութիւններ համարում խօսել և երկու անհատների վրա որոնք թէև կրում են դավաք անունը, բայց իրաւամբ կարող են բարեբարներ համարվել մեր քաղաքին։

Սրանցից առաջինը մի դիւղացի հօր որդի, Պետրոս Արզումանեանց անունով վերաբայ է, որ թէև ինչպէս ասում են—այրենին ետեւից գիւլա արձակողներից մէկն է, բայց մեր քաղաքի հասարակութեան սիրելին է, և հռչակված է առանց ցաւի ենթարկելու մարմին մէջից գնտակներ և կոտորակներ հանելու պատճառով, որի համար զանազան փորձերի միջոցով ստացած է կառավարութեանց պատուանշաններ։ Ունի մի տեսակ սպեկուլանի որին մահալամ են անուանում, և որի օգնութեամբ վերաւորները իրանց անտանելի վէճերից առողջանում են։

Պատահած է որ բժիշկները չը կարողանալով հանել մարմնի գնտակները, կամ չը կարողանալով բուժել վէճը, առաջարկած են կտրել մարմնի վերաւոր անդամը, սակայն այդ պարտի միջոցով գնտակները հանվել են կամ վերքերը առողջացել։

Իսկ միւսը որ շամախցի 50—55 տարեկանի մօտ անդամաւոր մի կին է Նազարի անունով, պարագայում է սընդղլութեամբ, այսինքն խորտակված անդամների առողջացնելով և իր արհեստի մէջ կատարեալ գերազանցութիւն է ցոյց տուած։

Հազարաւորներ մեր քաղաքացիներից կամ դիւղացիներից, որոնց մէջ և այս տղերի գրոգը, և թէև այսօր խեղանդամ կամ անդամաւոր չեն փխձում տան անկիւններում, պարտական են մի միայն այդ կնոջ հանձնարին։

Մի քանի տարի սրանից առաջ գեներալ Լազարովի կինը մի դժբաղդ հանգամանքի մէջ իր ոտըը ջանքոված լինելով, բժիշկները համոզում են վերջնապէս յուսահատական այն կէտին, որ խորհում են կտրել ոտըը. բայց մի քանի շամախցիների խորհրդով գեներալ Լազարովը հրաւիրելով այդ կնոջ Շամախուց, փոքր ժամանակվայ մէջ ի մեծ զարմացում բժիշկները, որոնք ծիծաղում էին այդ կնոջ գործը գրած բժշկական հրահարները վրա, գեներալի կինը այնպէս առողջանում է որ ջախջախածի նշույլ անգամ չէ երևում։

Ա. Զախարեանց

ՆԱՄԱԿ ԳՐԱՍՈՒՑ

17 յուլիսի

Այս ամսի 16-ից դէպի 17 գիշերը Ղարս քաղաքում մի մեծ հրդէհ բնկաւ։ Հրդէհը խիստ տարտախելի էր, ժամի 1-ից սկսվել էր, տեղից մինչև լոյսը և 8-ին հաղիւ հանգու։ Հրդէհը Չարսի լոյսայի մէջ էր, խառնութիւնի վեց շարք վառվեց, մօտ 200 խառնութիւց աւելի։ Քչերը կարողացան ազատել իրանց ապրանքները։ Աղետած ապրանքներն էլ շատը յափշտակեցաւ տան/կներէից։

Բազմութիւնը անչափ էր թէ բնակիչներից և թէ զօրքերից, բայց ոչինչ գործիք չը կար, քնչ կարող էին անել։ Կացին և գերաններ անգամ չէին կարող տանել որ գոնէ չըջակայ խառնութիւնից մի քանիսը քանդելով, միւսները ազատելին։

Խառնակութիւնը անօրինակ էր, բոլորը չուրած էին, պոլիցիականները նոյնպէս, բայց մի քանիսի հակողութեամբ բանտարկվեցան զոգացողներից մի քանիսը։

Տաճիկների մի քանի խառնութիւնում գտնվելով փամփուշտներ և վառօդ մեծ թնդիւն էր լինում։ Ասում էին որ մի քանի մարդիկ վերաւորվել են և մի քանիսն էլ կրակի զոհ են դարձած փլատակների տակ։

Կորուստը շատ մեծ է. կէս միլիոնից աւելի է հասնում։

Այսօր հարկւարտը մարդիկ զրկված ամեն կարողութեանց լալով ման են զարկաւ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Դաւրէթ, 8 յուլիսի

Կարգալով ձեր լրագրի մէջ որ յօդու «Արատեան ընկ» նուիրատուութիւններ են հաւաքվում,

հարկաւոր համարեցինք ժողովել և այստեղ հաւաքողաբար մի քանի հարուստ վաճառականներ չը կամեցան մասնակից լինել այդ գեղեցիկ գործին։ Ուղարկելով ձեզ հաւաքած 39 բուլլ, խնդրում ենք տպագրել նուիրատուների հետեւեալ ազգանունները։—Արտէմ Սարաջով 3 բուլլ, Կոստանդին Գարութիւնեանց 1 բ., Լեոն Եարվեանց 3 բ., Գարութիւն Հայրապետեանց 3 բ., Պետրոս Մեղիք-Սարգիսեանց 3 բ., Գրիգոր Բէշանեանց 3 բ., Գարութիւն Սուլիսեանց 3 բ., Անդրէաս Գուլամիրեանց 2 բ., Շահնազար Շահնազարեանց 2 բ., Դաւիթ Գաբէթեանց 50 կոպէկ, Մկրտիչ Սուլիսեանց 50 կ., Հայ ամն 1 բ. 20 կ., Աստուածատուր Սահակեանց 60 կ., Բաղդասար մահտեւի Մնացականեանց 50 կ., Տիգրան Տէր-Սահանեանց 1 բուլլ, Յովհաննէս Մարումեանց 1 բ., Գարութիւն Կորկանով 1 բ., Գրիգոր Խախախեանց 1 բ., Աստուածատուր Բուղաղեանց 1 բ. 20 կ., Գարութիւն Արիսեանց 50 կ., Մնացական Բէշանեանց 1 բուլլ, Աւետիս Յովհաննիսեանց 50 կոպէկ, Գասպար Բժիշկեանց 60 կ., Տիգրան Թովմասեանց 60 կ., Ասլան Մկրտչեանց 60 կ., Գասպար կամ Սաւառ 50 կ., Գասպարայ Միրզաբեանց 50 կ., Գալովը Ասլանեանց 70 կ., Դաւիթ Շահկաւեանց 1 բուլլ, Աւետիս Բինեաթով 1 բուլլ։

Երեք հայ երիտասարդներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐ

Նորին Կայսերական Մեծութեան Կայսրուհու անուանակոչութեան օրը, որ լինելու է յուլիսի 22-ին, մի քանի թիֆլիսցիներ մտածեցին տօնել մի բարի գործով։ Նոքա հաւաքում են զանազան նուիրատուութիւններ, թէ փողով և թէ իրեզներով և պէտք է նուիրեն հաւաքածը թիֆլիսի Նաւթլուի գինեւորական հիւանդանոցի մէջ գտնվող հիւանդ գինեւորներին։

Նորերումս մենք առիթ ունեցանք տեսնել թիֆլիսի Ալեքսանդրեան ապիւում շինած պ. Շեփերդի պալիթիւնում Գուլամիսի նախնայի հանքերից բերած շատ բնութիւն քարածուխի կըտորներ։ Պ. Շեփերդ ինքն արդիւնահանում է այդ քարածուխը մեծ քանակութեամբ և, ինչպէս մեզ յայտնել է, ծախում է պուղը 27 կոպէկով։ Նա արդէն ինքն գործ է ածում այդ վառելիքը իր պալիթիւնի խոհանոցում և շատ զոհ է այդ քարածուխից։

ԳԱՆՁԱԿԻՑ պ. Ն. Տէր-Ներսիսեանից ստացանք 10 բուլլ յօդու Արարատեան ընկերութեան։

ԳՈՒՇԵԹԻՑ մեզ գրում են. «Այստեղ հունձը արդէն սկսել են, որ չափազանց աւատ է։ Խաղողը նոյնպէս լաւ է։ Զօրքերի երթեկութեան պատճառով մեր քաղաքը կենդանի կերպարանք է ստացել։ Ամենափոքր խառնութիւնում մեծ փողեր են աշխատում։ Թանգութիւնը շարունակվում է, աղքատը դատի դուրսիւնը անտանելի է։ Միայն բանջարեղէնն է էժամ։ Ավերի պուղը արժէ մինչև 1 բ. 80 կ., գարին 1 բ. 20 կ., խոտը 30 կ.—40 կ., իւղի պուղը 12—16 բ., մսի ֆուռուր 10 կ.։»

ԶԱՆԱՆ-ՕՂԼՈՒՑ մեզ գրում են. «Այս տարի տեղացիները 300 սայլով թիֆլիսից Ալեքսանդրոպոլ գալի տարան կապալառու պ. Ա. Գի համար։ Պարոն Ա. պատճառ բերելով, որ գարնայական է իւրաքանչիւր սայլի քրէհից 3 բուլլ պակասեցրել է։ Ի հարկէ իւրաքանչիւր սայլապանի համար 3 բուլլ կորցնելը բաւական զգալի է, բայց պ. Ա. ինչ ինչ, երբ նա 300 սայլից աշխատում է 1700 բ.։»

ԲԱԳՈՒՑ մի պատահական թղթակից մեզ գրում է. «Օրերումս հասաւ այստեղ Կովկասեան ուսումնական չըջանի հոգաբարձուի օգնական պ. Մոզգալեվսկի։ Նա այցելեց հայոց ազգային հողեր երկսեռ դպրոցները և շատ զոհ մնաց, Պարոնը խորհուրդ է տուել օրիորդներին արքունի գրնաղիւս ուղարկել, որտեղ նոքա կարող են աւելի հիմնաւոր ուսում ստանալ և նրա փոխարէն մի ուրիշ տղայից ուսում նարան բաց անել, որովհետեւ ընտանեան գիւնաղիւս լինել է աշակերտներով։—Չենք կարծում, որ պարոն Մոզգալեվսկի շատ զոհ լինի մնացած, եթէ նա խորհուրդ է տալիս հայ օրիորդներին հանել հայ դպրոցից և ուրիշ տեղ տալ։

Հիմնաւոր ուսում ստանալու համար Առաջարկում ենք Բագուի մեր մշտական թղթակիցներին մեզ հաստատ տեղեկութիւն տալ այս հարցի վերաբերութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Չերնոգորիան նաւազնացութեան կատարեալ ազատութիւն է վայելում Բայան գետի վրա։ Այդ գետի ընթացքով չէ թշլատրվում նոր ամրութիւններ շինել, ի բաց առնելով Սկուտարին տեղական պաշտպանութեան համար, որոնք այնու ամենայնիւ վեց կրիմեայ տարածութիւնից աւելի չեն կարող տարածվել այս քաղաքից։

Չերնոգորիան իրաւունք չունի ոչ նաւեր, ոչ զինուորական զրօշակ ունենալու։ Անտիվարի նաւահանգիստը և Չերնոգորիայի բոլոր ջրերը փակված կը մնան բոլոր ազգերի զինուորական նաւերի համար։

Չերնոգորիայի երկրի լճի և ցամաքի մէջ գտնվող ամրութիւնները կը քանդվեն և այս շերտի մէջ նոր ամրութիւններ չենք արգելվում է։

Պոլեցիական, առողջապահական և ծովային վերահսկողութիւնը, թէ Անտիվարում և թէ Չերնոգորիայի բոլոր ափի երկայնութեամբ, կունենայ Աւստրո-Ունգարիան թեթիւ պահպան նաւերի միջոցով։

Չերնոգորիան մտցում է իր մէջ Դալմացիայի մէջ գործարկվող ծովային օրէնքները։ Աւստրո-Ունգարիան իր կողմից պարտաւորվում է հիւպոտոսական հովանաւորութիւն ունենալ Չերնոգորիայի առեւտրական գրօշախի վրա։

Չերնոգորիան պարտաւոր է համաձայնութիւն կապել Աւստրո-Ունգարիայի հետ Չերնոգորիայի նոր ցամաքի վրա երկաթուղիներ շինելու և պահպանելու իրաւունքի վերաբերութեամբ։ Այս ծանապարհների վրա երաշխաւորվում է հաղորդակցութիւնների կառուրեալ ազատութիւնը։

Յօդ. 30) Մահաւատականներ և ուրիշ անձեր, որոնք ցամաքի վրա ունեն հողի կտորներ որ միացած են Չերնոգորիային, և որոնք կը ցանկանան իրանց բնակութեան տեղերը հաստատել իշխանութեան սահմաններից դուրս, իրաւունք ունեն պահպանել իրանց անշարժ կայքը, տալով իրանց հողերը կապալով կամ նրանց կառավարութիւնը յանձնելով մէկ կողմից անձին։

Մի որ և ինչ մարդու սեփականութիւն կարող է օտարացած լինել միայն օրէնքների հիման վրա, ընդհանրութեան շահերի համար և նախապէս վարձատրութեամբ։

Թիւրք-չերնոգորեան յանձնաժողովին յանձնված կը լինի շարունակ երեք տարվայ ժամանակամիջոցում վերջացնել օտարացները, արդիւնաբերութեան և ծէսի կանոնների համաձայն Բ. Դրան հաշուով պետական կայքերի և բարեգործական հիմնարկութիւնների (վա. կու. Գ) վերաբերեալ բոլոր գործերը, նոյնպէս և մասնաւոր շահերին վերաբերեալ բոլոր հարցերը, որոնք կապ ունեն նրանց հետ։

Յօդ. 31) Չերնոգորիայի իշխանութիւնը անմիջապէս դաշն կը կապէ օտոմանեան Դրան հետ չերնոգորիան գործադատարներ կարգելու մասին Կ. Պոլսում և օտոման նեան կայսրութեան մի քանի ուրիշ տեղերում ուր որ անհրաժեշտ կարեւորութիւն կը զգացվի նրանց մէջ։

Օտոմանեան սահմաններում ճանապարհորդող կամ բնակվող չերնոգորիներ են թարկվում են օտոմանեան օրէնքներին և իշխանութիւնների միջազգային իրաւունքների ընդհանուր հիման վրա և չերնոգորիների

վերաբերութեամբ դրած սովորութիւններէ համաձայն:

Յօդ. 32) Չերնոգորեան զօրքերը պարտաւոր են 20 օրվայ ընթացքում ներկայ դաշնագրութեան հաստատվելու և փոխանակվելուց յետոյ կամ որքան կարելի է վաղ մաքրել այն ցամաքը որը դրաւած ունեն ներկայ ժամանակում իշխանութեան սահմաններէ դուրս:

Օտոմանեան զօրքերը Չերնոգորիային տուած ցամաքը կը մաքրեն նոյնպէս քսան օրվայ ընթացքում: Միայն նրանց տրվում է տասն և հինգ օր լրացուցիչ ժամանակամիջոց ամրացած կէտերը մաքրելու և պատերազմական պաշարը ու նիւթերը դուրս բերելու համար և նոյնպէս ցուցակ կազմելու այն գործիքների և առարկաների, որոնց իսկոն հեռացնել չէ կարելի:

Յօդ. 33) Որովհետեւ օտոմանեան պետական պարտքի մէջ մասը գրվում է Չերնոգորիայի վրա երկրի այն մասերի համար, որոնք արվում են նրան խաղաղական դաշնագրի զօրութեամբ, ուրմէն պետութիւնների ներկայացուցիչները Կ. Պոլսում պարտաւոր են Բ. Նրան համաձայնութեամբ և ճշմարիտ հիման վրա այս պարտքի քանակութիւնը որոշել:

Յօդ. 34) Բարձրագոյն դաշն կապող կողմերը ձանաչում են Սերբիայի իշխանութեան անկախութիւնը ներքեւ գրված յօդուածի պայմանների համաձայն:

Յօդ. 35) Որովմբում է դաւանութիւնների հաւասարութիւնը (յօդ 5-ի կրկնութիւն):

Յօդ. 36) Սերբիան հետեւեալ սահմանական գծեր ունեցող երկիրներ է ստանում:

Նոր սահմանը հետեւում է ներկայ սահմանագծին, բարձրանալով վէպի վերեւ Գրինայով այն կէտից, ուր վերջինը ընկնում է Սափի մէջ, թողնելով իշխանութեանը Մալի Զօրնիկ և Սաեար և Սերբիայի նախկին սահմանի երկայնութեամբ շարունակում է դնալ մինչև Կապաճնիկ, բաժանվելով նրանից Կանիւրի գագաթի վրա Այստեղից նա նախ և առաջ ուղեկցում է Նիշի սանջակի արևմտեան սահմանին հետեւելով Կապճնիկի հարաւային կողմնակի լեռներին, Մարիցի և Մրզար-Պլանինա սրածալ լեռնակատարներով, որ ջրաբաժան գիծ են կազմում Երարա և Սիւնիցա աւազանի մէջ մէկ կողմից և Տօպլիցայի մէջ միւս կողմից, մի և նոյն ժամանակ Տրեպոլից Թեում է թիւրքիային:

Յետոյ սահմանը դարձ է անում գէպի հաւաք ջրաբաժան գծով, Բերվինիցայի և Մեդովիցայի մէջ թողնելով վերջինի բոլոր աւազանը Սերբիային, ուղեկցում է Գօլեակ-Նյանի լեռնակատարներին (որոնք կազմում են ջրաբաժան գիծ, Կրկնայով գետի մէջ մի կողմից և Պոլանիցայի, Վեռնիցայի և Վորա-վայի մէջ միւս կողմից) մինչև Պոլանիցայի գագաթը: Յետոյ Կարպինա Պլանիցա լեռներով նա ձգվում է մինչև Կօնսկայի Վորա-վայի հետ միանալով, կտրում է այս գետը, բարձրանում է ջրաբաժան գծով Կօնսկայի առուի և Ներադովի մօտիկ Վորալում թափվող առուի մէջ, որտեղից հասնում է Պլանինա Ս. Նեդային ճեղքովնայից բարձր: Այստեղից նա հետևում է Ս. Նեդայի լեռնակատարներով մինչև Կիլեուս լեռը և այն կէտերը, որ քարտեզի վրա ցույց են տված 1516 և 1547 թվերով, նոյնպէս Բարին Դլավա սարով հասնում է Չեռնի Վեր լեռնաբնակ:

Չեռնի Վերից նոր սահմանը միանում է Բօլզարիայի սահմանի հետ, այսինքն:

Սահմանագիծը ուղեկցում է ջրաբաժան գիծին Սարոմայի և Վորալայի մէջ Սարդեր, Վիլզօր և Մեդեկա Պլանին գագաթների միջով, հասնում է Գալին, Չեռ-նայա Տրափա, Գարիօսի, Գրեյնից և Կեկա-նի—Կլադօնի միջով, Վերնիայա Սուկոսայի և Վորալայի մէջ գտնվող ջրաբաժան գծին, ուղեկցող ուղեւորվում է գէպի Սաօլ և ցած

գալով այնտեղից, կտրում է 1000 մետրերով Սիլեուզ գիւղից դէպի հիւսիս արևմուտք գտնվող Սօֆիայից դէպի Պրոսա տանող ճանապարհը: Յետոյ նա ուղիղ ուղղութեամբ բարձրանում է Վիլից Պլանինայի վրա և այնտեղից Բադօշին լեռան վրա, որը պատկանում է Խօշ-Բալկան շղթային, թողնելով Սերբիային Գօլիկնիզի գիւղը, իսկ Բօլզարիային Սիւնիցա գիւղը:

Բադօշինա լեռան գագաթից սահմանը գնում է հիւսիս-արևմտեան ուղղութեամբ Բալկան լեռնակատարներով Կիլպոլից Բալկանի և Սաարայա Պլանինայի միջով մինչև սերբիական իշխանութեան նախկին արևելեան սահմանը Կուլի Սիլեուզ Կուկի մօտ, իսկ այդտեղից անցնում է այդ սահմանը մինչև Բալկոլիցա Գունայի վրա:

Յօդ. 37) Մինչև նոր համաձայնութիւնը ներկայից Սերբիայի մէջ ոչինչ չի փոփոխվել իշխանութեան օտար երկրների հետ ունեցած առևտրական յարաբերութիւնների մէջ:

Ոչ մի մասը չի առնվել Սերբիայի միջով անցկացրած ապրանքների համար:

Օտարազգի հպատակների առանձնաշնորհութիւնները, արտօնութիւնները ինչպէս և իրաւասութեան իրաւունքը և հիւպատոսների հովանաւորութիւնը, որ գոյութիւն ունեն այժմ, կատարեալ զօրութեամբ պահպանվում են, մինչև որ դրանք իշխանութեան և շահ ունեցող պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ չեն փոփոխվել:

Յօդ. 38) Սերբիական իշխանութիւնը, փոխարինում է իր հաշուով Բ. Նրան և Աւստրո-Ունգարիային այն ամեն պարտաւորութիւնների մէջ, որ յանձն են առել վերջինեալ պետութիւնները երապական թիւրքիայի մէջ երկաթուղիներ մշակող ընկերութեան առաջ, նրանց վերջացնելու, շինվածքի և միացնելու վերաբերութեամբ, ինչպէս և երկաթի ճանապարհների շինելու վերաբերութեամբ, որոնք պետք է անցկացնվեն իշխանութեան նոր ձեռք բերած ցամաքի վրա:

Այս հարցերը կարգի բերելու համար հարկաւոր եղած դաշնագրութիւնները պետք է անցկացող կապվեն, ներկայ դաշնագրի ստորագրելուց յետոյ Աւստրո-Ունգարիայի, Բ. Նրան և Սերբիայի մէջ և նոյնպէս Բօլզարիայի մէջ իր համապատասխան սահմաններում:

Յօդ. 39) Այն մահմեականները, որոնք Սերբիայի հետ միացրած հողերի վրա անշարժ կայքեր ունեն և որոնք կը ցանկանան իրանց բնակութեան տեղը իշխանութեան սահմաններից դուրս հաստատել, իրաւունք ունեն իրանց սեփականութիւնը պահպանելու կապով տալով այդ կամ յանձնելով մէկ երրորդ անձին:

ՖԻՆԱՆՍԱ

Նոր-Կալէդօնիայում ընկնող ապստամբվել են Ֆրանսիական իշխանութեան վրա: Մոլային միւնիստրութիւնը հետագրով տեղեկութիւն ստացաւ որ սեւանթիւները սպանել են 89 եւրօպացիներ, որոնց մէջ գտնվում է նաև Կօլմէլ Պատերոս որ իր զօրքերով ուղեկցել է զապէլ ապստամբութիւնը: Շատ երկրներ և կանայք կոտորել են: Աքսորված կոմունիստները հանգստանում են ապստամբների հետ չեն միացած: Մոլային միւնիստրութիւնը խոյն հրաման է ուղարկել Նոր-Կալէդօնիայի կառավարչին որ ազգու կերպով աշխատեալ ապստամբութիւնը զսպելու համար և յայտնել է որ շուտով օդանավ զօրքեր կուղարկվեն Սայօնից և Ֆրանսիայից: Կառավարչը տված պատասխանը բաւականացուցիչ է, հանդարտութիւն սկսում է տիրել: Նոր-Կալէդօնիան Խաղաղական օվկիանոսի կղզիներից

մէկն է որի ընկնողը մարդակեր վայրենիներ են 1853 թվին Ֆրանսիացիները տիրեցին այդ կղզուն և քաղաքակրթութիւն տարածելով այդ բարբարոս երկրում, հալածեցին վայրենիներին:

Ֆրանսիական լրագրութիւնը շարունակում է հակառակվել անգլո-թիւրքաց դաշնագրութեան, բայց այդ հակառակութիւնը օրից օր մեղմանում է: Գաշնագրի ստագտակի կերպով հրատարակութիւնը սաստիկ ապաւումութիւն գործեց Ֆրանսիական մամուլի վրա, այդ յանկարծական ապստամբութեան յաջողում է այժմ սառնարին գատողութիւնը: «Journal des Debats» լրագիրը մի երկար յօդուած հրատարակելով, յորդորում է Ֆրանսիային չ հակառակվել անգլո-թիւրքաց դաշնագրութեան: Ֆրանսիան որոնում է առայժմ իր շահերը խաղաղութեան մէջ: Հեռագիրը լուր բերած էր թէ Ֆրանսիական կառավարութիւնը մտադիր է առաջարկել Ռուսաստանին որ վերադարձնէ իր նոր ստացած երկիրները Ասիայում, որպէս զե անգլո-թիւրքաց դաշնագրութիւնը ջնջվի և Անգլիան չը գրաւի Կիլպոսը: Այս համաբար յորից մտքերը վերադից և պատերազմի կասկածներ տվեց: Բայց չը պետք է խօսյն վերադիվել որ և իցէ հեռագրաւորից: «Times»-ի թղթակիցը Բերլինից յայտնում է այդ լրագրին թէ ինքն պաշտօնագէս տեղեկութիւն է ստացել որ այդ լուրը անհիմն է:

Բաթումի և Երևանի սահմանների հարցը վճռված ժամանակ կօնգրեսում, անգլո-թիւրքաց դաշնագրութեան հետ ծանօթացած էին տեղութիւնների հաւատարմարարները որոնց յայտնած էր լորդ Բիլօնսֆիլդ մի քանի օր առաջ քան թէ դաշնագրի հրատարակվելը:

ԱՌՍՏՐՈՒ

Վիեննայից յուլիսի 8-ին «Indépendance Belge» լրագրին գրված մի նամակից քաղում ենք հետեւեալները:

Աւստրիական միւնիստրութիւնը հրաժարական տվեց, բայց կայսրը չընդունեց: Երևի թէ Աւստրիայի միւնիստրութիւնը կը շարունակի իր պաշտօնը մինչև աշունը, պարլամենտական նիստերի նորից սկսվելու ժամանակ: Այս յետաձգման պատճառ համարվում է չեխերի յուզմունքը որոնք ուզում են մանակցել պարլամենտական նիստերին: Կայսրը ուզում է տեսնել թէ ինչ հետեւեալի կը հասնէ այդ յուզմունքը և այնուհետև կազմել նոր կարիներ, մանաւանդ որ կաբինետի վերակազմութիւնը կը լինի միայն պարլամենտի հաւաքված ժամանակ:

Ունգարիայում հակառակորդ կուսակցութեան լրագիրները չեն բաւականանում Բերլինի կօնգրեսի որոշումներով, բայց այդ զեղծութիւնը աւելի իրանց յիմարական յոյսերի հետեւեալն է քան թէ կօնգրեսի վարմունքի:

Պարսից շահի պատուի համար պարահանդէսներ եղան օպերայի թատրոնում: Լըրագիրները գրում են թէ պարսից շահը շատ է ախորժում այդ տեսակ թատերական հանդէսներին: Աս հասարակ, շահը շատ գոհ է Վիեննայում անցկացրած կեսնիցը և սաստիկ ցաւ է յայտնել որ չէ կարող երկար ժամանակ մնալ այստեղ: Փարիզի հիւանդների և նրանց սարսափել թանգ զինների համար դառն գանդաւաններ է անում: Երևի թէ այդ թանգութեան պատճառով շատ շուտ է հեռացել Փարիզից և թէ ուզում էր աւելի երկար մնալ այնտեղ: Բայց այստեղ այնպէս չէ, շահին փառաւոր հիւրընկալութիւն են անում և Վիեննայի ժողովուրդը մեծ հետաքրքրութեամբ լրվում է ամեն տեղեր ուր անց է կենում այդ արեւելեան վեհագետը որ բոլորովին ծածկված է փայլուն ադամանդներով: Շահը այստեղ

ուրիշ գործ չէ անում բայց միայն զբօսնել և լաւ ճաշկերպութիւն անել: Մեղքն իսան, շահի հաւատարմարար Լօնդօնում և Վիեննայում, մանաւոր պաշտօնով ուղարկված է Բերլին: Այդ գիւղամասը օրի համար ասում են թէ շատ երեւելի մի անձ է, շատ սիրելի եղած է շահին որ «Եւրօպայի իշխան» տարօրինակ պատուանունը տուել է նրան: Զայմանակ չէ որ շահը այդպիսի պատուանուններ տալ մինչև որ ինքն իրան անուանում է, ախիւրքի կենտրոն:

«Socialist» լրագրի խմբագիր Նվարցինգը մէկ տարի բանտարկութեան դատապարտվեցաւ: հաւատարկութիւնը անկարգութեան գրգռած լինելու մեղադրանքով:

ՄԵՆԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՍՏԻՐ

ՄԻՋԱԶԳՈՒՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ա. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 19 յուլիսի: Ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 233 ռ. 5 Կ., երկրորդ 235 ռ., արեւելեան 95 ռ. 12 Կ., ոսկի 7 ռ. 77 Կ.: Ռուսաց մի ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,59 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 217 մարկ 25 Փէն., Փարիզի վրա 267 Ֆրանկ 25 սանտիմ: Տրամադրութիւնը հանգարտ է: Ամերիկայի կերօսին 315, Կապիսեան կերօսին 240:

10 ՆՆՈՒ, 18/30 յուլիսի: Համայնքների ժողովի երէկվայ նիստի ժամանակ Հարաւիգաւոն ներկայացրեց իր յայտնի եղբակցութիւնը: Ազատամիտ կուսակցութեան բարձր հաւանութեամբ նա սկսեց նրանով, որ յայտնեց, թէ Ռուսաստանի պահանջները անցեալ յունիսին աւելի վաղը էին այն զինում ներքից, որ նա արել է Բերլինի դաշնագրում: Ինչ անպիտան կառավարութիւնը, հարցնում է նա, այն ժամանակ չը համոզեց թիւրքիային ընդունել այդ պահանջները: ձառախօսք շատ խիստ վերաբերվեց Անգլիայի վարածնքին: Յունաստանի վերաբերութեամբ նա հերքում էր լորդ Բիլօնսֆիլդի հաւատարմարարի ճշմարտութիւնը, իբր թէ ընդգիծագրութիւնը զրգուցեց յոյներին կուսակցական նպատակներով: Արգելանքներ աւելի ստացան, որովհետեւ նորա յիշված էին Ռուսաստանի վրա: Ապագայ ժամանակներում յոյները աւելի կը ցանկանան Ռուսաստանի կողմի յենել քան թէ Անգլիայի:

ՎԻԵՆՆԱ, 18/30 յուլիսի: «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ Բ. Նրան և Կայսրի մէջ անգլո-թիւրքական դաշնակցութեան մի քանի որոշումների գործադրութեան մասին եղած բանակցութիւնները երկարանում են: Սուլթանը ցանկանում է, որ ստանց նրա նախնական համաձայնութեան ոչինչ վերանորոգութիւններ չը մտցնվեն աւսիական թիւրքիայում: Ռուսները զիտաւորութիւն ունեն գրաւել Բեսարաբիա անմիջապէս դաշնագրի վաւերացումից յետոյ: Այդ նպատակով ռուսաց զօրքերը յիս են քաղվում Կօրբուջայից Բեսարաբիայի ուղղութեամբ: Բուլղարական զինուորական միւնիստրը զբաղված է բուլղարական զօրքերով Կօրբուջա գրաւելու կարողադրութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 19/31 յուլիսի: Խաղաղական դաշնագիրը այսօր վաւերացրած է գերմանական թագաժառանգի ստորագրութեամբ: Գաշնագրի վաւերացրած օրինակների փոխաւորութիւնը կը կտարվել շարաթ օրը:

Կ. ՊՈԼՍՈ, 19/31 յուլիսի: Լուր կայ, որ Զինի հաղորդել է Բ. Նրան, թէ Աւստրիան զիտաւորութիւն չունի կապիլ թիւրքիայի հետ որ և է պաշտօնական դաշնագրութիւն թիւրքիային Սերբիայի և Չերնոգորիայի դեմ պաշտպանելու նպատակով, այլ հօգ կը տանի պահանջել հանդատութիւն և ապահովութիւն այդ երկու իշխանութիւնների սահմանների վրա:

ՎԻԵՆՆԱ, 19/31 յուլիսի: Բօնիայի Սաւայիվօ քաղաքում տիրում է կատարեալ անիշխանութիւն: Ամբոխի և զօրքի մէջ պատահած արեւահեղ կռիւց յետոյ ամբոխը տիրեց զինարանը:

[illegible]

-առաջին մասնախոսու ժողովրդի (ԷՃ. քոմ)
ԵՆՆՈ ՕՐԻՈՐԿՑ ԴՊՐՈՑԻ
ԷՆ ՊՈՆՍՈՆՑԻ 2 շարժա-
րկերի գրադարանում, [Ժողովուրդ]
ԴՊՐՈՐԿԱՆՈՐ ԿԱՆՈՆԱՆՈՐ ԿԱՆՈՆԱՆՈՐ
ԿԱՆՈՆԱՆՈՐ ԿԱՆՈՆԱՆՈՐ ԿԱՆՈՆԱՆՈՐ

Հարաթական 16 դպուկ ուղարկ
դեպի զառադուներին և ձեռագործու-
րեկան 500 րուբլ. ուճիրկուր ցան-
կ զպրորդի տեսչութեան այս հաս-
ո Եոսիփու Մելանցու

մայրամայն շատ լավ ձևով է մտնում 3-ին 3-ով 3-ով
 Դեռ առաջ է գնացել կլեգեմոն գծից
 շատ լավ դեմ է հետևում է զման՝ առ զմ
 -ից է մեղի դաշվ խղամաղեղալ ռվժաբանս
 Դեռ իմից զմեկից դու զբաշվ մեկ խղամ
 Դու զմեկից զմեկից իմեկից իմեկից իմեկից
ԵՐԵՒ ԱՐՇՐՈՒՆԻ
 Դու զմեկից զմեկից իմեկից իմեկից իմեկից

ПЪ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ
а до 2 часовъ пополудни

ԻՆՏԵՐ ԴԲԱՆԵՆԵԿԸ

ՍԵՒՆ 9 ժամից մինչև 2 ժամ

ԿԻՐԱԿԻ օրերից:

Дозволено Цензурою 20 Іюля 1878 г. Тифлисъ